«Սպորտային գնումներ՝ մինչև 50% քեշբեքով» Mastercard քարտերի արշավի մասնակցության պայմաններ

1. Ներածություն

1.1 Mastercard վճարային համակարգի քարտերի (այսուհետ՝ Քարտ) քարտապանների (այսուհետ՝ Քարտապան) համար «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից իրականացվում է արշավ (այսուհետ՝ Արշավ):

1.2 Արշավի կազմակերպիչ է հանդիսանում «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ):

1.3 Մասնակցելով Արշավին՝ մասնակիցն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները:

1.4 Սույն Պայմաններին և Դրույթներին վերաբերող ցանկացած որոշում համարվում է վերջնական և անվիճարկելի:

2. Ընդհանուր դրույթներ

2.1 Քարտապանների համար իրականացվող Արշավի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը տրամադրվում է www.acba.am կայքում:

2.2 Կազմակերպիչն իրավունք ունի ցանկացած պահի փոփոխություն կատարել սույն Պայմաններում և Դրույթներում (այսուհետ՝ Պայմաններ), որի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը կտեղադրվի Պայմանների 2.1 կետում նշված հարթակում:

2.3 Արշավի շրջանակում հետվճարները տրամադրվում են առանց որևէ հարկային պարտավորության: Հարկային պարտավորությունների կատարումը ստանձնում է Կազմակերպիչը:

2.4 Արշավին մասնակցության համար որևէ վճար չի գանձվում:

2.5 Արշավի մասնակիցը հաստատվում է Կազմակերպչի կողմից՝ անհրաժեշտության դեպքում Քարտապանի նախատեսված տվյալների ստուգումից հետո: Կազմակերպիչն իրավունք ունի կապ հաստատել մասնակցի հետ և ստուգել նրա իսկությունը:

3. Մասնակցության պայմաններ

3.1 Արշավի մասնակցության նպատակով 2026թ. թվականի նոյեմբերի 11-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ Քարտապանները պետք է.

- Բանկի կողմից թողարկված Mastercard ցանկացած տեսակի քարտով (այսուհետ՝ Քարտ) իրականացնեն վճարային գործառնություն (այսուհետ՝ Գործառնություն) անմիջապես Adidas, Nike, Puma, New Balance, On, Alo Yoga սպորտային բրենդների արտասահմանում գտնվող պաշտոնական վաճառակետերում, պաշտոնական կայքերում և/կամ հավելվածներում:

3.2 Արշավի պայմաններին բավարարած յուրաքանչյուր հաճախորդի, անկախ Քարտերի քանակից, կտրամադրվի տվյալ Գործառնությունների հանրագումարի 20 տոկոսի չափով միանվագ հետվճար (cashback), առավելագույնը՝ 20 000 ՀՀ դրամ:

3.3 Այն Քարտապաններին, ովքեր Արշավին կմասնակցեն իրենց Mastercard UEFA Champions League քարտով՝ կտրամադրվի բոլոր Քարտերով իրականացված Գործառնությունների ընդհանուր գումարի 50 տոկոսի չափով միանվագ հետվճար (cashback), առավելագույնը՝ 30 000 ՀՀ դրամ:

3.4 Գործառնությունների հաշվարկը կատարելու համար հիմք է ընդունվում Գործառնության կատարման ամսաթիվը: Որպես Գործառնության կատարման ամսաթիվ դիտարկվում է Քարտի քարտային հաշվի քաղվածքում տվյալ գործարքի կատարման ամսաթիվը:

3.5 Կից Քարտի Քարտապանները չեն կարող մասնակցել հիմնական Քարտից անկախ: Կից քարտերով կատարված Գործառնությունները գումարվում են հիմնական Քարտերով կատարված Գործառնություններին:

3.6 Այլ վճարային համակարգի լրացուցիչ քարտերով կատարված Գործառնությունները չեն դիտարկվում որպես Գործառնություն:

3.7 Այլ վճարային համակարգի քարտին կցված լրացուցիչ Քարտով կատարված Գործառնությունները դիտարկվում են որպես Գործառնություն:

3.8 Արշավի ընթացքում հաշվարկվում է Քարտապանի բոլոր գործող Քարտերով կատարված Գործառնությունները:

3.9 Արշավի մասնակցի առնվազն մեկ Քարտը հետվճարի տրամադրման պահին պետք է լինի գործող:

3.10 Սույն Պայմանների 3.3 կետում նշված հետվճարի տրամադրման պահին մասնակցի առնվազն 1 Mastercard UEFA Champions League տեսակի քարտը պետք է լինի գործող, այլապես հետվճարը կհաշվարկվի համաձայն սույն Պայմանների 3.2 կետում նշված սահմանաչափի՝ պահպանելով սույն Պայմանների 3.9 կետի պայմանը:

3.11 Արշավի ընթացքում յուրաքանչյուր հաճախորդ կարող է ստանալ հետվճար միայն մեկ անգամ:

3.12 Հետվճարի գումարը կվճարվի Քարտի քարտային հաշվին մինչև 2027թ. մարտի 3-ը ներառյալ:

3.13 Կազմակերպչի կողմից զեղծարար գործարքի վերաբերյալ հիմնավոր կասկած ունենալու պարագայում Քարտապանի մասնակցությունը կարող է անվավեր ճանաչվել: Զեղծարար գործարքի չափանիշները սահմանվում և որոշվում են Կազմակերպչի կողմից:

3.14 Քարտապանի կողմից Արշավի շրջանակում հաշվարկված և սույն Պայմանների 3.1 կետում նշված պայմանի վրա ազդող Գործառնությունների հետվճարներ լինելու պարագայում Կազմակերպիչն իրավունք ունի չեղյալ համարել Արշավին Քարտապանի մասնակցությունը:

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել www.acba.am կայք կամ զանգահարել 010-31-88-88 հեռախոսահամարով:

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից: